V ԴԱՐԻ ՏԻԵԶԵՐԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՊԱՏԱՌԻԿ

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայ միջնադարյան գիտությունը V—VII դդ. զարգանում էր հարազատ մնալով անտիկ գիտության առաջադեմ ավանդույթներին։ Անտիկ գիտության ժառանգության մեջ առաջատար էր տիեզերագիտությունը, որը գիտությունների չճյուղավորվածության պայմաններում տարբեր բնագավառների սինթեզ էր։ Ուշագրավ է անտիկ տիեզերագիտության հիմնական դրույթների պահպանման փաստը միջնադարյան հայ գիտության մեջ։ Այս տեսակետից հետաքրքիր է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում բերված Գյուտ կաթողիկոսի (461—471) անունով հայտնի նամակը՝ ուղղված Աղվանից թագավոր Վաչեին (մինչև 462)։

Նամակի հեղինակը մեծ նշանակություն էր տալիս բնական գիտություններին, որոնց իմացությամբ է նա պայմանավորում նյութական աշխարհի ճանաչումը։ Նա գրում է. «...բանս զչորեքնիութեանս աշխարհ ոչ կարէ ասել։ Եւ այս վիճակ ոչ ամենեցուն, այլ որք քաջն դեգերացն յուսումնասիրութեան՝ 'ի թուականին, յերկրաչափականին, յաստեղաբաշխականին, 'ի բժշկականին...»[1]։ Նյութական աշխարհի չորս տարրից կազմված լինելու հարցը այստեղ չի քննվում, այլ ներկայացվում է որպես արդեն լուծված դրույթ։ Այնինչ անտիկ գիտության համար այն երկար ժամանակ քննարկման առարկա է եղել և վերջնական լուծում է ստացել Արիստոտելի „Περὶ οὐρανοῦ"[2] երկում։ Նյութական աշխարհի հիմքում Արիստոտելը դնում է չորս իրարից կախված տարրեր՝ կրակ, օդ, ջուր և հող, որոնց հակադիր հատկություններով են պայմանավորված բնության մեջ իրերի անընդմեջ առաջացումը և ոչնչացումը[3]։ Հետագայում Անանիա Շիրակացին, հիմնվելով Արիստոտելի այդ հիմնական դրույթի վրա, գրում է. «լինելութիւնն իցէ սկիզբն ապականութեան, և ապականութիւն դարձեալ անդրէն իցէ սկիզբն լինելութեան։ Զի այսմ ավնաս հակառակութենէ՝ աշխարհ առցէ զտևողութիւն»[4]։

Տարրերի տեսությունը, որին նույնպես ավելի մանրամասն անդրադարձել է Անանիա Շիրակացին, Արիստոտելի երկրակենտրոն ուսմունքի անքակտելի մասն էր, որի հիմնական դրույթներից էր երկրի գնդաձևության գաղափարը[5]։ Որ նամակի հեղինակը երկրի գնդաձևության գաղափարի կողմնակից էր, հաստատում են հետևյալ տողերը. «բայց ահ անկաւ ինձ մեծ և ահա-

---

1 «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 31։

2 Aristotle, On the Heavens, London, 1939.

3 Arist. II. 3.

4 Անանիա Շիրակացի, «Տիեզերագիտութիւն և տոմար», աշխատությամբ Ա. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 31։

5 Է. Լ. Դանիելյան, Արիստոտելի տարրերի տեսությունը և Անանիա Շիրակացու «Տիեզերագիտությունը» («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 217—222)։

գին և բարձրագոյն քան զերկնի երկինս և խորագոյնս քան զներքին կիսագունտն»[6]։

Խոսելով վարի կիսագնդի մասին, նամակի հեղինակը կարծես թե նաև ծանոթ է եղել հակոտնյաների գաղափարին, որին հետագայում հանդիպում ենք Անանիա Շիրակացու «Տիեզերագիտությունում»[7], ինչպես նաև «Աշխարհացույցում»[8]։ Հակոտնյաների գաղափարը նույնպես անտիկ գիտության երկրի գնդաձևության գաղափարի արգասիք էր, որը մանրակրկիտ ուսումնասիրել և ընդհանրացրել էր Արիստոտելը[9]։

Հետաքրքրության է արժանի նաև այն, որ նամակի հեղինակը, խոսելով որոշ երկնային մարմինների մասին, բերում է դրանց արտաքին հատկանիշները, աստվածներ չհամարելով դրանց։ Նա գրում է, որ լուսինը «երկոտասան անգամ ի տարուոջն վիժած, ժանգակոծ, մանգաղաձև, կիսագունտ...», իսկ արեգակը «շեղագնաց, թիւրընթաց...։ Յիրաւի սմա Յոյնք Ապողովն կարգացին»[10]։ Այստեղ առկա է երկրակենտրոն ուսմունքը և, համապատասխանաբար, երկրի գնդաձևության գաղափարը, քանի որ դեռևս Արիստոտելը նշում էր, որ եթե երկնային մարմիններից որևիցէ մեկը գնդաձև է, ապա մնացածները նույնպես պետք է գնդաձև լինեն[11]։

Քրիստոնեական ուսմունքին օտար չէին հեթանոսական գաղափարների ընկալումը որոշ հարմարեցումով։ Եվ դրանով իսկ, նամակը, կրելով անտիկ տիեզերագիտության որոշ դրույթներ, նաև տարբերվում է դրանցից։ Այնտեղ կարդում ենք. «Այն, որ նստին յերկնից յերկինս և տեսանէ զաշխարհս ամենայն...»[12]։ Երկնքի և արարչի գաղափարը նույնպես անտիկ աշխարհի ժառանգություն էր, որով կամուրջ էր գցվում հեթանոսական և քրիստոնեական աստվածաբանության միջև։ Հունաբան դպրոցի գիտնականները հատուկ ուշադրություն էին դարձնում անտիկ գիտության աստվածաբանական կողմի վրա։ Հայ մատենագիտության մեջ սկզբնական շրջանում ուժեղ էր հելլենիստական գաղափարախոսությունը և դրանով իսկ միջնադարյան հայ գիտությունը ավանդական կերպով կապված էր անտիկ գիտության հետ։ Հայոց եկեղեցին ընկալել էր Արիստոտելի ուսմունքը, որով և հակադրվում էր բյուզանդական պաշտոնական եկեղեցուն[13]։

Անտիկ գիտությունը միջնադարի մի քանի հարյուրամյակների ընթացքում չգերազանցվեց։ Դրա հիմնական պատճառներից էր ֆեոդալիզմի դարաշրջանում քրիստոնեական գաղափարախոսության սահմանափակությունը, որով պայմանավորվեց հետադիմական տենդենց՝ բնության և տիեզերքի բացատրությունը «Աստվածաշնչի» դոգմաներով։ Նյութական աշխարհի ուսումնասիրության գործը հետադիմեց։ Հունաբան դպրոցի գիտնականների ներդրումը վաղ միջնադարի հայ գիտական մտքի պատմության մեջ այն էր, որ

---

6 Մովսես Կաղանկատվացի, էջ 25։

7 Անանիա Շիրակացի, էջ 13։

8 Է. Լ. Դանիելյան, Պտղոմեոսի ցամաքային տեսության արտացոլումը «Աշխարհացույցում» («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 179, ծան. 2)։

9 Arist. II, 3.

10 Մովսես Կաղանկատվացի, էջ 31—32։

11 Arist.. II, 11.

12 Մովսես Կաղանկատվացի, էջ 29։

13 С. Т. Еремян, Раннефеодальная культура Армении («Очерк истории СССР», III—IX вв.), М., 1954, стр. 234.

նրանք դրսևորեցին ստեղծագործական մոտեցում անտիկ ժառանգության նկատմամբ և շարունակեցին անտիկ գիտության առաջադեմ ավանդույթները։ Օբյեկտիվորեն այնպիսի պայմաններ էին ստեղծվել, որ հունաբան դպրոցի գիտնականները հակադիր ուղղությունների դեմ, աստվածաբանական վեճերում, բացի աստվածաշնչային դոգմաներից, հիմնվում էին նաև կոնկրետ տրամաբանական համակարգերից բխող պոստուլատների վրա, որոնց հիմքում ընկած էին անտիկ բնափիլիսոփայական մտքի նվաճումները։

КОСМОГРАФИЧЕСКИЙ ФРАГМЕНТ V ВЕКА

Э. Л. ДАНИЕЛЯН

Резюме

Письмо, известное под именем католикоса Гюта (461—471), направленное албанскому царю Вче (до 462), приводится в «Истории Албании» Моисея Каланкатуйского. Оно содержит некоторые космографические положения, которые своими корнями восходят к античной науке.

В раннесредневековой Армении ученые школы эллинофилов в богословских спорах с византийской официальной церковью и зороастризмом, кроме библейских догм, опирались на постулаты, вытекающие из конкретных логических построений, в основе которых лежали достижения античной естественнонаучной мысли.